

եռանկիւնով, խորանի քառանկիւնու մը-  
նացած տարածութիւնը դարձեալ եռան-  
կիւններ է ձեւացնում, մէկը ներքեսում  
ուր ծայրով դէպի վեր ուղղուած, իսկ եր-  
կուսը աջ և ձախ կողմից՝ ուր ծայրերը  
դէպի վերին անկիւններն ուղղուած, որնց  
մակերեսով թը արժանահիկ և եռատերեւի  
մոտիւներով ծածկուած եւ նրանց ցողուն-  
ներով, որ տեղ տեղ օգակաւորուած են բա-  
րակ և սպիտակ զոյգ զծերով, ինչպէս սա-  
սանեան արուեստին և յատուկ է: Խո-  
րանի դաշտը ոսկի է:

Լուսանցքի զարդը այստեղ ևս արմա-  
ւենիկից և եռատերեից կամ հնգատերեից  
կազմուած պատուանցանի և երկոր ձողի  
վերայ հաստատուած խաչ է, տարրեր ձե-  
ւակերպութեամբ, քոն Մարկոսինը և Յով-  
հաննէսինը: Ք-ի ուղղահայեաց և հորիզոն-  
նական ձողերը վերջաւորութիւններին մօտ  
մանեկաւորուած են և հիւսկէններով զար-  
դարուած, իսկ բնորոշ բոլորակի վերայ  
կանթեր անցրած: Զողերի մակերեւոյթը  
զարգարուած է փոքրիկ բոլորակների շար-  
քով, մէջները սպաստիկաձեւ կամ երկրաչա-  
փական զարդերով:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅԱՎԱՀԻՒՆ  
(Շար.)

## Ա Մ Ա Ռ

Երկնակամարտին կապված ըրբեղ  
Լոյսով կ'ողողէ աւելը պայծառ.  
Տիեզերական մեծանուած կանքեղ  
Անշոշնմելի, խարոյկ անըսպառ:

Ազլեցուրեան սակ նառազայրներու,  
Անքնակատար ոզգը կը բրուայ  
Ալորապրոյս լայն նամբաներու,  
Եւ արփիափայլ դաշերու վրօյ:

Պարաք արտերու նասկերը ոսկեայ  
Պայով ձաներան կը նակին զետին.  
Ալօր հաշելով մանզաղին, կալին:

Առայգ մըշակը պասակներ նասկեայ  
Կ'անցընէ խոնար զրյուխը եղին  
Եւ ձեռք կը դրնէ մանին ու դէղին:

ՄԵԴՐԻԿ

## ԱԿԵՆԱԿԱՐԱԿԱՆ ՄԱՆՐԱԿՐՈՒՑ

ԵՊԻԾԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Ն. Ակինեան վերջերս մի հատոր  
լոյս լն ծայեց. «Եղիշէ Վարդապետ և իւր  
Պատմութիւնն Հայոց Պատերադմի» խո-  
րագրով, որ իր ընդարձակ մատենագրա-  
կան-պատմական ուսումնասիրութիւնը  
ուաշին մասն է: Իր ուսումնասիրութիւնը  
դեռ շարունակում է «Հանդէս Ամսօրեայ»  
ուսումնաթերթի մէջ: Հեղինակի նպատակն  
է ցոյց տալ, որ Եղիշէլի Պատմութիւնը նա-  
խապէս զրուած է Զ զարում իրը 572 թ.  
ապօտամբութիւնն պատմութիւն: Մի զար  
յետոյ մի մոլեւանդ յունատեսոց հայ խար-  
դաբած է այդ Պատմութիւնը: Հիմնուելով  
Դ. Փարպեցու Պատմութիւնն Բ զրուագի  
վրայ՝ նա փոփոխում է Եղիշէլի Պատմու-  
թիւնն զործող անձերի անունները, կրծա-  
տած է այս կամ այն մասը, նոր յաւելում-  
ներ է կցած և 572 թ. ապօտամբութիւնն  
պատմութիւնը դարձրած է 451 թ. կրօնու-  
կան պատերազմի պատմութիւն:

Այս նոր տեսակէտը հիմնառը կուլու հա-  
մար՝ հեղինակը բերում է շատ ապացոյց-  
ներ, զնում ու լուծում է բազմաթիւ զրա-  
կան-պատմական խնդիրներ: Մեր նպա-  
տակը չէ այդ տեսութիւնը քննութիւնն  
առնել իր բովանդակ ծաւալով: Մենք կ'ու-  
զէինք հեղինակի բերած ապացոյցներից մի  
երկուսի արժէքը գնահատել. ցոյց տալ թէ  
ո՞րքան պիտանի են այդ ապացոյցները հե-  
ղինակի նոր տեսակէտիւնը փաստելու համար:

1. Դաւիթ Երեց եւ Վարդան Բ. Մամիկոնեան.

Ում հրամանով կամ հայցումով է  
զրուած Եղիշէլի Պատմութիւնը: Ահաւա-  
սիկ մի խնդիրը, որ փորձում է լուծել Հ.  
Ն. Ակինեան: Եղիշէլի Պատմութիւնն ձե-  
ռառապիրների մի մասը խորագրի մէջ ունի.  
«Դաւիթ Երեցը հայցեալ». միւս մասը  
զրում է. «ի խնդրոյ Դաւիթի Մամիկոնի»:  
Բանասիրութիւնն մէջ ընդունուած է ա-  
ռաջին խմբի «Դաւիթ Երեցին» համարել  
«Մամիկոննեան»: իսկ երկրորդ խմբի «Դա-  
ւիթ Մամիկոնին» համարել «Երեց»: Հե-  
ղինակն ետքը և Մամիկոնի և ձեւը համա-  
րում է ո կրծատուած աղաւաղուած մէկ  
ձեւ նախնական «Մամիկոննեանի» (էջ 106,  
121, 123): Դաւիթ Երեցի անունը յիշար-

տակում է և մեր ունեցած հնագոյն ձեռագիրը, որ գրուած է 1130 թ.: Այսպէս ուրեմն ձեռագիրների ասելով Եղիշէի Պատմութիւնը զրուած է Դաւիթ երէցի խնդրանքով:

Թ. Արձրունի պատմագիրը, որ ապրում ու գրում էր թ-ժ գարում, ասում է թէ Բարձումայ ասորին խնդրեց Եղիշէից «Պատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ»: Այսպիսով ժի գարի մի ձեռագիր ասում է թէ Պատմութիւնը գրուած է Դաւիթ երէցի խնդրանքով, իսկ ժ գարի մի պատմագիր ասում է, թէ նա գրուած է Ս. Վարդանի հրամանով: Ո՞ր տեղից են քաղուած այս պնդումները. ստուգապէս յայտնի չէ: Հ. Ն. Ակինեան ենթադրում է, որ Թ. Արձրունի իր տեղեկութիւնը քաղում է կամ աւանդութիւնից կամ իր ձեռքն եղած Եղիշէի Պատմութեան խորագրից (124): Այս տեղեկութիւնը կարող է նաև Թ. Արձրունու ենթադրութիւնը լինել. ուրեմն՝ ո՞չ աւանդութիւն և ո՞չ խորագիր, այլ բառնասիրական վարկած: Այսպէս ենթադրել նա կարող էր, նկատի ունենալով մեր գրական բարքերը. Խորենացին զրած էր Սահակ Բագրատունու «Հրամանով». ինքը գրում էր Գաղիկ Արձրունու հրամանով»: Նա կարող էր ենթադրել, որ Եղիշէն զրած է «Հրամանաւ սրբոյն Վարդանայ»: Զեռագիրների մէջ կայ մէկը, որի խորագիրն է. «Յիշատակարան Ս. Վարդանայ Հայոց զօրավարին» (121). ո՞չ հեղինակ կայ յիշուած այստեղ, ո՞չ հայցող կամ հրամայող: Այսպիսի մի ձեռագիր կարող էր ունենալ և թ. Արձրունին և յօրինել իր վարկածը: Այս երեք ենթադրութիւններից ամեն մէկը կարող էր իրական լինել, բայց՝ կրկնում եմ ստուգապէս յայտնի չէ բուն իրողութիւնը:

Իսկ ս՞ր տեղից է զալիս 1130 թ. գրուած Եղիշէի Պատմութեան խորագիրը, որ յիշատակում է Դաւիթ երէցի անունը. ու նաև ի՞նչ ազգիւրից է ձեռագիրների միւս խմբի խորագիրը, որ յիշում է «Դաւիթ Մամիկոնի» անունը: Զգիտենք ստուգապէս: Հեղինակի կարծիքով վերջին «ձեւը մեծ հնութեան կնիք չի կրեր իր վրայ» (123), ի՞նչ է այս խօսքին իմաստը. հնարաւած է համարում Հ. Ն. Ակինեան այս տեղեկութիւնը. յիշագայ արտագրողի

գլխից զուրս եկած է նկատում «Դաւիթ Մամիկոնի» անունը. թէ կարծում է փոխուած է միայն «Մամիկոնեան» ձեւը, և դարձած է «Մամիկոնի»: Պէտք է կարծել, որ հեղինակը «Մամիկոնի» ձեւն է նոր համարում և ոչ «Դաւիթ Մամիկոնեան» անունը. ինչպէս տեսանք հեղինակն այն կարծիքին է, որ «Մամիկոնեան» ձեւը «նախնական» է (123): Այսպիսով կարող ենք մեր հարցումը ճշգել և կրկնել. ո՞ր ազրիւրից են «Դաւիթի երիցու» և «Դաւիթի Մամիկոնեան» անունները: Առաջին ենթադրութիւնները այն է, որ զրանք գալիս են այն ձեռագիրների խորագիրներից, որ արտագրած են մեր ձեռքն եղած օրինակների զրիչները: Բայց կարող է պատահել, որ այդ տեղեկութիւնները նոյնպէս մի-մի վարկած լինեն, որ յօրինած են այդ գրիչները: Ուրիշ խօսքով այդ տեղեկութիւնները կարող են ոչ խորագրից և ոչ աւանդութիւնից բխած լինել, այլ յիշագայ զրիչների յօրինած վարկածները լինել:

Բայց պէտք է մի տարբերութիւն զնել: Եթէ Թ. Արձրունու վարկածը կարող էր իր հոգերանական ու պատմական հիմքերն ունենալ, Դաւիթ երէցի վարկածը այդ հիմքերը չունի: Ս. Վարդանը պատմական անձ էր և մեծ նախարար. նա կարող էր հրամայել, որ Պատմութիւն գրուի, կարելի էր ենթադրել, թէ նա է Եղիշէին հրամայած, որ Պատմութիւն գրի: Անհաւանական չէր կարող թուալ այս վարկածը ո՞չ յօրինողին և ոչ այս մասին լսողին: Անշուշտ մի Դաւիթ երէց Մամիկոնեան ևս կարող էր խընդուրել, որ մի Պատմութիւն գրուի. բայց ո՞վ էր Դաւիթ երէցը. ո՞ր տեղից բռւսաւ նրա անունը. ինչո՞ւ Դաւիթ և ոչ Արքահամար էրէց: Պարզ է, որ այս տեղեկութիւնը նուազ հիմք ունի վարկած համարուելու և աւելի հաւանական է, որ նա արտուգրուած լինի մի ձեռագրի խորագրից: Դժուար է ընդունել, որ մի գրիչ Ժի գարում հնարած լինի «Դաւիթ երէց» անունը իրը հայցողի անուն Եղիշէի Պատմութեան. բայց կարելի է ընդունել, որ Թ. Արձրունին Ժ գարում ենթադրած լինի թէ Ս. Վարդանն է հրամայել Եղիշէին իր Պատմութիւնը զրել: Դրիչը հոգերանական ու պատմական հիմք չունի «Դաւիթ երէց» յօրինելու, մինչդեռ Թ. Արձրունին այդ հիմքերն ու-

նէր և կարող էր իր վարկածը յօրինել։ Այսպիսով Հաւանական է, որ Գաւառիթ երիցու «անունը արտագրուած լինի», քան Հնարուած կամ հնթագրուած էսկ «Հրամանաւ Ս. Վարդանայ» ասութիւնը անհընարին չէ, որ մի ենթագրութիւն լինի և ոչ արտագրուած։ Օ Դաւիթ երէցի անունը գտնուում է 1130 թ. ձեռագրի մէջ, որ անշուշտ արտագրուած էր մի ուրիշ ձեռագրից։ Այս ուրիշ ձեռագիրը կարող էր նոյն դարում գրուած լինել, կարող էր և շատ աւելի հին լինել։ Բայց այդ ուրիշ ձեռագիրը կարող էր ինքը աւելի հին ձեռագրից արտագրուած լինել։ Ինչ կը բարդ և մտածենք՝ ԺԷ դարի ձեռագիրը հնթագրում է մի ուրիշ աւելի հին ձեռագիր։ Եթէ համարենք թէ մի հարիւր տարուայ հնութիւն ունէր այդ ձեռագիրը՝ դրանով մինք ընդունած կը լինենք, որ Գաւառիթ երէցի անունը կար նաեւ ԺԷ դարում գրուած մի ձեռագրի խորագրի մէջ։ Որով կարող ենք ասել, թէ Ժ-ԺԷ դարերում եղիչէի Պատմութիւնը ոմանք համարում էին Օ Դաւիթ երէցի։ Խնդրանքով գրուած, ոմանք՝ Ա. Վարդանի հրամանով։

Այս վերջին վկայութեան մասին Հ. Ն. Ակինեան զրում է. «Եախորդ քննիչները համարելով այս կէտն անիմաստ՝ անտեսած էին։ Բայց իմաստուն պատմագրին գրչին տակ այսպիսի տեղեկութիւն մը պիտի չուզէի ես իմաստալուրկ տեսնել։ Թովմաս հաւատարմութեամբ զրի աւանդած է ինչ լսած է աւանդութեամբ զրի աւանդած է ինչ լսած էր ձեռքը գտնուած եղիչէի խորագրին մէջ։ Այս հիմամբ պիտի ենթադրեմ թէ Թովմայի օրով Եղիչէն ըմբռնուած էր միրաժաւրապէո Պատմուրիւմ Մրոց Վարդանանց (կամ «Գիրք Պատմուականք Հայոց»), զորս գրեաց երանելի յահանանց Եղիշէ հրամանաւ Մրոց Վարդանայ» (հեղինակն է ընդգծած)։

ԱԱկնարկուած Վարդանն է Վասակի որդի Վարդան Մամիկոնեան, Հայոց պատրապեալ, որ 572-ի և Հայոց պատերազմին հերոսն էր։ 578-ին հեռացաւ անիկա արեւելեան ռազմագաշտէն... զնաց իր լնտանիքին ի կ. Պոլիս։ Հաւանօրէն ա'յստեղ տուաւ Վարդան պատուէր Եղիչէին անմահացնել 572-ի դէպքերը, «Հայոց պատրազմի» յիշատակը» (124-5)։

Այս խօսքերից երկում է, որ Հ. Ն.

Ակինեան Թ. Արծրունու տեղեկութիւնը համարում է կամ «աւանդութիւն» կոմ գրաւոր ազգիւր՝ «խորագիր»։ Արիշ խօսքով նա ենթագրում է, որ Թ. Արծրունին կամ լսած էր, որ Ս. Վարդանն է հրամանութիւնը Եղիչէին զրի իր Պատմութիւնը, կամ իր ձեռքն եղած օրինակի խորագրի մէջ կարդացած էր, որ Եղիչէի Պատմութիւնը գրուած է Ս. Վարդանի հրամանով։ Նա չի ենթագրում, որ այդ տեղեկութիւնը կարող է բուն իսկ Թովմայի յօրինած վարկածը լինել։ Սրանից հետեւում է, որ Թովմայի ձեռքն եղած Եղիչէն պատմում էր Ս. Վարդանի պատերազմի մասին, որ զրուած էր նոյն Ս. Վարդանի հրամանով։ Թովմայի այս տեղիկութիւնը Հ. Ն. Ակինեան պիմաստագուրկ» չի համարում, նկատելով մանուանդ, որ Թովման սիմաստուն պատմագիր» է։

Հեղինակի կարծիքով Եղիչէի Պատմութիւնը խարդախուած է և զարում։ Կետեւայէս մօտ երեք զար Ս. Վարդանը աւանդութեան կամ «խորագրի» մէջ համարուած է Եղիչէի Պատմութեան մեկենաս։ Այս տեղեկութիւնը սակայն նոր քննիչները համարած են «անիմաստ» և «անտեսած են»։ Ինչո՞ւ Անշուշտ նրանք մտածած են. — Եղիչէի Պատմութիւնը 451 թ. ապստամբութեան պատմութիւնն է։ Առաջնամբ ապստամբութեան վարիչն եղած է Ս. Վարդան Մամիկոնեան, որ նահատակուած է պատերազմի մէջ։ Նահատակուածը չի կարող հրամայել, որ իր վարած պատերազմի պատմութիւնը գրուի։ Հետեւայէս Թ. Արծրունու ասածն անիմաստ է, ուստի անտեսած են»։ Հ. Ն. Ակինեան սակայն «անիմաստ» չի համարում «իմաստուն պատմագրի» այս տեղեկութիւնը։ Ինչո՞ւ համար. որոշ չէ։ Նա ենթագրում է, որ Թովմայի ժամանակ այն կարծիքը կար, որ Եղիչէի Պատմութիւնը գրուած է Ս. Վարդանի հրամանով։ Ինքը որոշապէս չի ասում, բայց խօսքի մի գարձուածքով մեզ ուզում է հասկացնել, որ Ս. Վարդանի անուան տակ պէտք է հասկանալ 572 թ. հերոս Վարդանին։ Երբ զրում է թէ «ակնարկուած Վարդանն է Վասակի որդի Վարդան Մամիկոնեան, որ 572-ի և Հայոց պատերազմի» հերոսն էր», պարզ չէ թէ ո՞ւմ «ակնարկուածի» մասին է խօսքը. Թ. Արծրունու թէ Հ. Ն. Ակինեանի Դրա համար

գրեցինք վերը թէ «ինքը որոշապէս չի առածամ»: Մենք տեսանք, որ ո՞չ թէ Արձրունին և ոչ իր կարդացած «խորապիրը» կամ լսած աւանդութիւնը» Ս. Վարդանին երբեք համարած չեն 572 թ. հերոս: Հեղիւնակն ինքն իսկ վկայում է այս մասին, զրելով թէ Թովմայի ժամանակ Եղիշէի Պատմութիւնը «մերձաւորապէս» համարուած է «Պատմութիւն սրբոց Վարդանանց», որ զրած է Եղիշէն «հրամանաւ սրբոյն Վարդանայ»: Պարզ է ուրեմն, որ Հ. Ն. Ակինեանն է այդ «Ս. Վարդան» անուան տակ 572 թ. հերոս Վարդանի անունը տեսնում «ակնարկուած»: Բայց ի՞նչ հիման վրայ. — և ո՞չ մի: Թէ Արձրունու վկայութեան ջուրը չատ հեռու է հոսում Հ. Ն. Ակինեանի ջաղացքից: Եթէ նա թէ Արձրունու տեղեկութիւնը «անիմաստ» չի համարում՝ ենթադրելով թէ Թովման «ակնարկում է» 572 թ. Վարդանին, ապա սխալում է չարաչար, որովհետեւ Թովման ո՞չ ոքի չի ակնարկում, այլ պարզապէս անունով խօսում է 451 թ. հերոս Ս. Վարդանի մասին: Այդ տեսակ «ակնարկ» արած չէ եւ որ եւ է ուրեիցը ո՞չ «աւանդութեան» եւ ոչ որ եւ է «խորապի» մէջ: Ամէնքը խօսում, աւանդում կամ խորապիւմ են Ս. Վարդանի անունը եւ ոչ ոք չի յիշատակում 572 թ. հերոս Վարդանին, Վասակի որդուն: Առաջին մարզը, որ խօսում է այս մասին և Թովմայի զրածը համարում է «ակնարկութիւն» դա ինքը Հ. Ն. Ակինեանն է: Իր այս պնդումի համար Թովմայի վկայութիւնը կոռւան չէ և լինել չի կարող: «Վարդան» յիշատակութիւնը բաւական չէ նրան 572 թ. հերոս Վարդանը համարելու. մանաւանդ թէ Թովման չատ որոշ և լիատառ զրում է «հրամանաւ սրբոյն Վարդանայ»: Գիտենք թէ մեր պատմութեան մէջ մինչեւ Թէ Արձրունին (և նրանից յետոյ) մէկ Ս. Վարդան կայ միայն և դա 451 թ. պատերազմի հերոսն է: Գիտենք նաև, որ 572 թ. Վարդանը ոչ միայն ուրեր չի համարուած, թէև պատերազմած է հայոց կրօնի անունով, այլ և նկատուած է իր հայրենի եկեղեցու գաւանանքն ուրացող և երկրի աւերման պատճառ: «Արքոյն Վարդանայ» զրելով՝ այսպիսի մէկին ակնարկել» չէր կարող Թովման և ինչպէս իր զրածին հետեւում է՝ մտքովն իսկ անցած չէ «ակնարկել»:

Թէ Արձրունին պատմում է թէ Բարձումայ անունով մի ասորի քարոզիչ խարդախած է Եղիշէի Պատմութիւնը, զուրս ձգելով նրա միջից Արձրունիների մասին եղած դրուտական հատուածները: Բարձումայ անունով մի ասորի քարոզիչ եղած է իրօք, որ մեռած է 492/4 թ.: Թէ Արձրունին, որ մի սիմաստուն պատմազիր» է հեղինակի կարծիքով՝ անշուշտ այնքան սիմաստուն էր, որ հասկանար թէ և զարում մեռած մի ասորի չի կարող Զ դարում զրած մի պատմութիւն խարդախսել: Խարդախսած է իրօք Բարձուման Եղիշէի Պատմութիւնը — սա տարբեր հարց է. բայց պարզ է նաև այս տեղից, որ Թովմայի կարծիքով Եղիշէի Պատմութիւնը Ս. Վարդանանց պատմութիւնն է. նրա նիւթը 451 թ. պատերազմն է. նրա հերոսը Ս. Վարդանն է, որ նահատակուած է այդ պատերազմի մէջ. որ այդ պատմութիւնը զրուած է Բարձումայի ժամանակ և խարդախսուած է և զարում, հետեւապէս եւ զրուած է այդ զարում. եւ ուրեմն նա չէր կարող ակնարկել» 572 թ. հերոս Վարդանին: Ակնարկութեան» այս վարկածը Հ. Ն. Ակինեանի յօրինածն է. Թովման ոչ մէկ հիմք է տալիս այդ վարկածը յօրինելու համար: Թովմայի պատմածն իրոք հիմունք Հ. Ն. Ակինեանի նոր տեսութեան՝ անորդէք է լիովին: Մենք տեսանք թէ հեղինակը Թովմայի վկայութիւնը «անիմաստ» չի համարում. տեսանք նաև, որ նա որոշապէս չի ասում թէ ի՞նչ հիման վրայ այդ վկայութիւնը նա համարում է ոչ սիմաստազուրկ»: Քննիչները իրաւունք ունին «անիմաստ» համարելու և «անտես» անելու այդ վկայութիւնը, եթէ Թովմայի ասածն այնպէս հասկացել: Խոկապէս՝ նահատակուած մէկը կարո՞ղ է հրամայել... եւ Թովման, որ սիմաստուն պատմազիր» է, այնքան խելք չունէ՞ր, որ այսքան պարզ բան հասկանար: Ի՞նչպէս է, որ այդ «իմաստուն պատմազիրը» հաւատ է ընծայած այսքան անիմաստ «աւանդութեան» կամ «խորապի»: Պէտք է կարծել, որ Թովման անհնարին չի համարած, որ մի նահատակուած մարդ հրամայի զրել այն պատերազմի պատմութիւնը, որի մէջ ի՞նքը հրամայողը նահատակուած է: Եւ կարծում եմ Թովման իրաւունք ունի,

այդպիսի մի բան կարող է լինել, եթէ պատմագրելու հրամանը տրուի ապօտամբութեան սկզբին և հրամայողի մահից առաջ: Ինչ որ «քննիչները» համարած են «անիմաստ» և անհնարին, թովմայի համար միանգամայն հնարաւոր էր: Գագիկ Արծրունին, որ հրամայած էր թովմային գրել Արծրունեաց Պատմութիւնը, կարող էր մի ամեն յետոյ սպանուել որևէ կուռի մէջ, և եթէ թովմայի Պատմութեան խորապրի մէջ կարդայինք ո Պատմութիւն թ. Արծրունոյ, զոր գրեալ է հրամանաւ Գագկայ իշխանի ու եւ նոյն պատմութեան մէջ կարդայինք Գագիկ իշխանի մահուան մասին՝ զրանով «անիմաստ» չէր լինի Պատմութեան խորագիրը: Դ. Փարպեցին պատմում է թէ Ս. Վարդան խօսելով Յազկերատի առջե՝ ասաց. «Բայց արդ յայսի հետէ այսպէս կամք են, ջանամ, զի թէ ցայժմ գործեալ ինչ իցէ, և ոչ արժանի անուան կամ զովութեան՝ յայսմ հետէ հնարիմ ամենայն զօրութեամբ և ուժով, օգնականութեամբն Աստուծոյ, զործել գործ այսպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր զրանն և յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչեւ ցյաւիտեան» (էջ 55, Թիֆլիսի տպագրութեան): Այդ «համբաւը» ցյաւիտեանը պատմուելու համար պէտք է, որ զրուէր. և թովմայի համար անբնական և «անիմաստ» չէ, որ Ս. Վարդան հրամայած լինի Եղիշէին գրել իր ձեռնարկած զործի, այսինքն՝ 450 թ. ապրատամբութեան պատմութիւնը: Թովմայի գրածն այսպէս հասկանալով՝ նա կը շարունակի մնալ «իմաստուն պատմագիր» և իր զրածը «անիմաստ» չի լինի:

Ենթագրութեանց սիրահար չէմ. գերազառում եմ ասել «չգիտենք», քան ենթագրութիւններ անել: Բայց բանասիրութիւնն առանց ենթագրութեան ապրել չի կարող: Տեղեկութեանց բացերը նա գոցում է հաւանական ենթագրութիւններով: Առհաւասիկ մի ենթագրութիւն, որ յօրինում եմ ենթագրութեանց բարեկամների համար: Սրանով կարելի է «հաշտեցնել» մեր հին գրականութեան մէջ եղած տեղեկութիւնները Եղիշէի Պատմութիւնը զրել հրամայողի կամ հայցողի մասին:

450 թ. ապստամբութեան սկզբին Վարդան Մամիկոնեան «հրամայում է ո

Եղիշէին զրի առնել իրադարձութիւնները: Պատերազմի մէջ վարդան նահատակում է հաւատաքի համար: Երա մահ կաց յետոյ Մամիկոնեան տանից մի նախանձախնդիր երէց Դաւիթ անունով յիշեցնում է Եղիշէին Ս. Վարդանի հրամանը, որ հրամայողի նահատակութեամբ սրբազան կատակի արժէք է ստացած և «հայցում է» իրագործել այդ կտակը: Եղիշէն կատարում է Ս. Վարդանի հրամանը և Դաւիթ երէցի «հայցումը»: Այս ենթագրութեամբ կը լուծուին բոլոր կնճիռները, Եղիշէի Պատմութիւնը իրօք որ զրուած կը լինի «Հրամանաւ սրբոյն Վարդանայ»: Անհիմն չի լինի և Դաւիթ երէցի անուան յիշշտակութիւնը, քանի որ նա՛ կը լինի Ս. Վարդանի «Հրամանը» յիշեցնողը եւ իր «հայցումով» գործադրել տուողը: Թէ թովման և թէ ձեռագիրները սիստուած չեն լինի. Թովման յիշտակած կը լինի «Հրամայողին», որ էր Ս. Վարդան, իսկ ձեռագիրները «հայցողին», այսինքն հրամանը յիշեցնողին, որ էր Դաւիթ երէց Մամիկոնեան:

Սրանով չի հերքում Հ. Ն. Ակինեանի նոր տեսութիւնը Եղիշէի Պատմութեան մասին: Սրանով անարժէք է զառնում նրա տեսութեան հիմքերից միկը: Նա շատ ուրիշ հիմքեր է բերում իր նոր տեսութիւնը ապացուցելու համար: Այդ տեսութիւնը լիովին մերժելու համար պէտք է այսպէս հատ-հատ քննութեան առնուին նրա բերած ապացուցները և կամ ժխտուին կամ տարբեր մեկնութիւն ստանան:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՏԷՅՐ ՄԻՒՔԷԼԻՔԻ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՈՐՄԱՆԿԱՐՆԵՐԸ

1. Վանիը.

Մազումով հայ Մալաթիացի Մեծ Անապատականը՝ Եւթիմիոս Երուսաղէմ գալուն, առաջին անգամ դիմած էր Փառանի Անապատը ուր միայնակեաց թէոկտիստոսի հետ բարեկամացած էր հոգեսր Եղբայրութեամբ